ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Բրազիլիան Հարավային Ամերիկայի ամենամեծ երկիրն է, որն իր տարածությամբ գրավում է այդ երկրամասի գրեթե կեսը: Երկիրն ունի 8.511.965 քառ. կիլոմետր տարածություն և շուրջ 120 միլիոն բնակիչ: Ժողովուրդը պատկանում է Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցուն: Բրազիլիայում պետական և ազգային լեզուն պորտուգալերենն է, սակայն տարածված է նաև իսպաներենն ու անգլերենը: Երկիրն ունի ընդարձակածավալ անտառներ ու դաշտավայրեր և հարուստ է բնական ռեսուրսներով:

1882 թ. Բրազիլիան հռչակվեց Հանրապետություն և դարձավ անկախ երկիր:

Վերջին հարյուրամյակում երկրի բնակչությունն աճել է տասն անգամ, և այսօր Բրազիլիան ավելի բազմամարդ երկիր է, քան Հարավային Ամերիկայի մյուս բոլոր երկրները միասին վերցրած:

1500-ական թվականներից սկսած Բրազիլիան Պորտուգալիայի միակ գաղութն էր Նոր Աշխարհում: Դարերի ընթացքում տասնյակ հազարավոր սևամորթներ բռնի բերված են այստեղ Աֆրիկայից՝ աշխատելու դաշտերում և հանքերում: Շատերը գաղթել են նաև Իտալիայից, Գերմանիայից և Ճապոնիայից:

Բրազիլահայ գաղութի թիվն այսօր հասնում է շուրջ 23 հազարի:

ՄԵԿՆՈՒՄ ՍԱՆ ՊԱՈՒԼՈ

Սան Պաուլոն Բրազիլիայի խոշորագույն քաղաքներից մեկն է: Մինչև 1955 թ. այն եղել է երկրի մայրաքաղաքը, որից հետո մայրաքաղաք է հռչակվել Բրազիլ քաղաքը, որը գտնվում է երկրի ներսում, Սան Պաուլոյից շուրջ հազար կիլոմետր դեպի հյուսիս:

Սան Պաուլոն հիմնադրվել է 1554 թ. եկվիտների կողմից: Գտնվում է Տիետե գետի ափին: Այժմ ունի շուրջ չորս միլիոն բնակչություն: Քաղաքում կան համալսարան, բազմաթիվ առևտրական և մշակութային տներ ու գործարաններ:

Հայերն այստեղ սկսել են հաստատվել 19-րդ դարի վերջերից: Ավելի ստվար քանակությամբ հայեր գաղթել են համաշխարհային առաջին պատերազմից հետո: Նրանք մեծ մասամբ կիլիկեցիներ են: Սան Պաուլոյում կա կազմակերպված հայկական համայնք՝ բաղկացած շուրջ 20 հազար հոգուց: Քաղաքում հայերն ունեն եկեղեցի, դպրոց, ուսանողական, մարզական և հարենակցական միություններ, հիվանդանոց, երգչախումբ և երկու ռադիո ժամ:

Մայիսի 23-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Ներսես եպս. Պողապալյանի, Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանի և Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի, Բուենոս Այրեսից մեկնում է Սան Պաուլո:

Բուենոս Այրեսի «Էսեյա» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել Արգենտինայի Հանրապետության կրոնից նախարար դոկտ. Բրավոն, Բուենոս Այրեսի Հայ Առաքելական Եկեղեցու Կենտրոնական Վարչության անդամները, Ընդունելության Պատվո Հանձնախմբի անդամները և ժողովրդի հոծ բազմություն:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅՈՒՄ

Մոտ երեք ժամ տևող թռիչքից հետո Վեհափառ Հայրապետին փոխադրող օդանավը վայրէջք է կատարում Սան Պաուլոյի «Գոնկոնհաս» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տաթև ծ. վրդ. Ղարիբյանը, Բրազիլիայի հայոց թեմի կենտրոնական վարչության անդամները, Սան Պաուլոյի կարդինալի ներկայացուցիչ Դոն Դեսիոն եպիսկոպոսը, օրթոդոքս Եկեղեցու միտրոպոլիտ Տ. Իգնատիոսը, հայ հարանվանությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Սան Պաուլոյի նահանգապետի ներկայացուցիչ դոկտ. Ֆերնանդոն և հավատացյալ ժողովրդի հոծ բազմություն:

Օդանավակայանում պատվո հյուրերին հատկացված սրահում ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Սան Պաուլոյի հայոց Ս. Գևորգ եկեղեցի:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Հրաշափառ»-ի երգակցությամբ Նորին Սրբությունը թափորով հանդիսավորապես մուտք է գործում Սան Պաուլոյի հայոց Ս. Գևորգ եկեղեցի:

Եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալների հոծ բազմությամբ, որոնք երկյուղածությամբ եկել էին ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունը:

Եկեղեցում բարիգալստյան խոսքով հանդես է գալիս Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ .Տաթև ծայր. վրդ. Ղարիբյանը՝ ասելով.

«Վեհափառ Տեր, երջանիկ և ծանր պարտականություն է ինձ համար արտահայտել վգացումները բրազիլահայ գաղութի ամեն մեկ հավատացյալի այս պատմական պահուն: Երրորդ անգամ ըլլալով շնորհ կընծայվի այս գաղութին ընդունիլ Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն Հայոց Ընդհանրական Հայրապետի այ-

ցելությունը, այցելություն մը, որ առիթ կուտա վերանորոգելու մեր զգացումները, մեր ազգային և եկեղեցական գործունեությունը այս գաղութին մեջ: Բրազիլահայ գաղութը ստեղծված է համաշխարհային առաջին պատերազմեն ետք, երբ այս ժողովուրդին հայրերը հաստատվեցան այստեղ գրեթե մերկ վիճակի մեջ, ասպնջական տուն մը գտան օրինյալ և քրիստոնյա այս երկրին մեջ: Եվ սակայն, ինչպես ամենուրեք, շնորհիվ հայ ժողովուրդի աշխատունակ ոգիին, այստեղ ևս գաղութն ունեցավ իր բարգավաճ վիճակը, և գաղթականներ հայերը, իբրև բարի քաղաքացիներ, սիրվեցան և գնահատվեցան բրազիլացի ժողովուրդի կողմե և իրենց աշխատասեր ոգիի շնորհիվ առաջ գնացին, շինեցին իրենց եկեղեցին, իրենց կրթական հաստատությունները, որպեսզի ամուր հիմերու վրա հաստատ մնա հայ ժողովուրդի գոյատևելու և ապրելու կամքը:

Մեծ Եղեռնեն հրաշքով փրկված և այս հյուրընկալ ափերուն վրա ապաստան գտած տարագիր հայերու զավակներն են այսօր, որոնք սիրով և զգայմունքով կշրջապատեն Ձեզ և իրենց սրտի և հոգիի խորքեն հուզումով և ուրախությամբ կընդունին Ձեր ներկայությունը, որպեսզի ոգեշնչվին հայ ժողովուրդի դարավոր սրբություն սրբոց Սուրբ Էջմիածնի վորությամբ, որպեսզի ներշնչվին հայրենիքի իրականությամբ, որովհետև վստահ ենք, որ Ձեզի հետ կբերեք մեզի հայրենիքի և Ս. Էջմիածնի ողջույններն ու օրհնությունները, որոնցմով պիտի վորանան մեր հոգիները, և մենք առավել հավատքով և հուզումով կառչած պիտի մնանք մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինին, մեր մայր հայրենիքին, մեր մշակույթին և որպես հայ պիտի շարունակենք ապրիլ այս հեռավոր ափերուն վրա, որպեսզի օր մը, երբ իրականանան մեր բոլոր երազները և հույսերը, չկորսնցնենք մեր ինքնությունը և ոգեկան ուժերը:

Այսօր, Վեհափառ Տեր, մենք հոգեպես ուրախ ենք և մանավանդ երախտապարտ այն բարձր ուշադրության համար, որ, ընդառաջելով մեր թեմի եկեղեցական-ազգային կեդրոնական վարչության հաստատ հրավերին, եկաք բերելու համար մեզի Ձեր մշտական ներկայությամբ այն ներշնչումը, որուն այնքան պետք ունեինք մենք: Այն խոսքերը և օրհնությունները, զոր պիտի բաշխեք մեզի, պիտի գոտեպնդեն մեզ, որ մենք մեզ զգանք քիչ մը ավելի հայ, քիչ մը ավելի քրիստոնյա ու Հայ Եկեղեցվո հովանիին տակ փառք տանք Աստուծո ու հավատարիմ մնանք Մայր Աթոռ Ս. Էջմյածնին և հայոց հայրապետության:

Արդ, Վեհափառ Տեր, շնորհակալությամբ և երախտագիտությամբ կողջունենք Ձեր գալուստը և կխնդրենք, ուղղեք Ձեր հայրապետական խոսքը, օրհնությունը և պատգամը մեր հավատացյալ ժողովուրդին»:

Տ. Տաթև ծայր. վարդապետի բարիգալատյան և ողջույնի խոսքերից հետո, եկեղեցում հավաքված բազմությունը ունկնդրում է Հայոց Հայրապետի օրհնության խոսքին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սիրելի հավատացյալներ, այս բառերով կրկին անգամ ես ձեզ կողջունեմ՝ Քրիստոսի Հարության ավետիսը բերելով մեր հավատքի բազմադարյան կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն: Քրիստոսի Հարության խորհուրդը և շնորհները կտարածվին տարվա բոլոր օրերուն վրա: Ս. Զատկի տոնը կեդրոնն է

Սան Պաուլոյի հայոց Ս. Գևորգ եկեղեցին

քրիստոնեական կյանքին, որովհետև Քրիստոսի Հարության շնորհները մենք կրդձանք, որ տարածվին մեր բոլորիս վրա տարվա բոլոր օրերուն:

Սիրելի հավատացյալներ, բացեք ձեր սրտերը Քրիստոսի Հարության ավետիսին առջև և հաղորդվեցեք անոր խորհուրդով, աղոթքով և մաղթանքով, որ դուք կարողանաք վայելել շնորհները այդ ավետիսին և ըստ այնմ վարել ձեր անհատական կյանքը ընտանեկան հարկի տակ և համայնական կյանքի մեջ: Այս է քրիստոնյայի կյանքի հիմնական հատկանիշը: Այս ավետիսով և այս շնորհներով է, որ կմխիթարվին, կզորանան, կլուսավորվին մեր հոգիները իբրև քրիստոնյաներ և կդառնան, հնարավոր չափով գտնե, ավելի կատարյալ և ավելի հեռու ամեն տեսակ փորձություններե և մեղքերե: Մեր Եկեղեցվո կոչումն է դարերե ի վեր կերտել քրիստոնյայի ճշմարիտ նկարագիրը հոգևոր և բարոյական իմաստով: Եվ ահավասիկ այս ավետիսով է, որ ես ձեզի կուգամ Ս. Էջմիածնեն սիրով ու կարոտով և խանդավառ ոգիով:

Տեսա օդակայանեն սկսյալ մինչև այստեղ ձեր հուզումը և ձեր սրտերու ալեկոծումը: Եվ ահավասիկ ձեզի կբերեմ իմ սիրո և կարոտի զգացումներուն հետ մեկտեղ նաև Աստուծո օրհնությունը Ս. Էջմիածնեն և ողջույնը հայաստանցի ձեր հավատացյալ եղբայրներուն և քույրերուն:

Ես Ս. Ջատկի տոնեն անմիջապես հետո ճամփա ելա Ս. Էջմիածնեն՝ սիրտը լեցուն սուրբ Հարության շնորհներու լույսով, աչքս հագեցած հայրենի աշխարհի տեսարաններով: Վերջին պահուն «Զվարթնոց» օդակայանին մեջ տեսա փառավոր և վեհափառ Արարատը մեր, որ կարծեք խորհրդավոր անլսելի ձայնով ինքն ալ ողջույն կուղարկեր իմ միջոցավ ձեզի՝ հայորդիներուդ, որովհետև մենք կհավատանք, որ դուք հարազատ զավակներն եք Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցվո և մեր ժողովուրդի:

Կուգամ ձեզի՝ նաև ծանոթանալու համար ձեր հոգևոր համայնքային կյանքին, ձեր կրթական և մշակութային հաստատություններուն, հույս ունենալով, որ իմ խորհուրդներով, իմ խոսքերով կրնամ բանով մը ավելի եռանդ, ներշնչանք բաշխել բոլորիդ, որպեսզի ավելի լուսավոր և պայծառ մնա ձեր եկեղեցին, ավելի ամուր հիմքերու վրա զարգանան ձեր կրթական և մշակութային հաստատություններն ու միությունները:

Դուք կապրիք այս երկրին մեջ՝ վայելելով ամեն ազատություն և նպաստավոր պայմաններ, պահպանելու ձեր նախահայրերու սուրբ հավատքը, ավանդությունները, ձեր մայրենի լեզուն և հայ մշակույթի արժեքները, մնալով կարգապահ և նվիրյալ քաղաքացիները այս հյուրընկալ մեծ երկրին, որ Բրազիլն է: Կբերեմ իմ հայրական սիրո ողջույնը թեմիդ առաջնորդ հոգեշնորհ հայր Տաթև ծայր. վարդապետին, եկեղեցական-ազգային իշխանությանց բոլոր անդամներուն, բոլոր հայկական կազմակերպություններուն, բոլորին, որոնք այս կամ այն չափով եկեղեցվո շուրջ համախմբված՝ շեն և պայծառ կպահեն այս աղոթքի Տունը և հայ համայնքը:

Ինչքա՜ն լույսով առատ է ձեր այս փառավոր եկեղեցին: Իմ սիրտն ալ լույսով լեցվեցավ մուտք գործելով այս տաճարեն ներս: Կմաղթեմ, որ այս նյութական լույսի ճառագայթներուն տակ ձեր հոգիներեն ներս ճառագայթե նաև հոգևոր լույսը, և դուք անարատ քրիստոնեական ոգիով ներշնչված, հայկական զգացումներով գոտեպինդ՝ շարունակեք ձեր կյանքի ճանապարհը:

Ս. Էջմիածնի հոգևոր բարձունքեն կմնամ միշտ աղոթող ձեր բոլորի արևշատության, ձեր ամենքի քաջառողջության, ձեր գործոց հաջողության և ընտանեկան երջանկության համար:

Վեհափառ Հայրապետը օրհնություններ է բաշխում Սան Պաուլոյի Ս. Գևորգ եկեղեցում հավաքված հավատացյալներին

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամեն:

Եկեղեցում տեղի ունեցած բարիգալստյան հանդիսավոր արարողությունից հետո, Հայոց Հայրապետը Իր շքախմբով առաջնորդվում է Սան Պաուլոյի «Մակուտ» հյուրանոցը, որտեղ բնակվում է Սան Պաուլոյում Իր կեցության բոլոր օրերին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՐԱԶԻԼՈՒՄ

Մայիսի 24-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով, ուղեկցությամբ Տ. Տաթև ծայր. վարդապետ Ղարիբյանի և Սան Պաուլոյի Ընդունելության Հանձնախմբի անդամների, ուղևորվում է Հանրապետության մայրաքաղաք Բրազիլ:

Բրազիլի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ են մաղթում ծովային մինիստրության կրնվորական հրամանատար Այվես Կորբեան, քաղաքի կառավարչի ներկայացուցիչ Կորոմել Գալուանոն և այլ պետական պաշտոնական անձինք:

Վեհափառ Հայրապետը Բրազիլիայում նույնպես հաչակվում է պետության և մայրաքաղաքի պատվո հյուր:

Հանրապետության մայրաքաղաքում Նորին Սրբությունը պաշտոնական հանդիպումներ է ունենում Երեսփոխանական Ժողովի նախագահ Պալվիս Մարսիլիայի, Ծերակուտական Ժողովի նախագահ Մոասիր Դալլայի և Արտաքին Գործերի Հանձնախմբի ատենապետ Ռաջիդ Սալդանիա Դերձիի հետ:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Կոնգրեսի սրահում տրվում է ճաշկերույթ, որին ներկա էին սենատոր Ալոիսիո Շորեսը, պապական նվիրակ դոն Կառլո Ֆուրնոն և Բրազիլի արքեպիսկոպոս դոն Ֆալկաոն:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը քաղաքավարական այցելություն է տալիս Բրազիլիայում Սովետական Միության արտակարգ և լիսկոր դեսպան Վլադիմիր Չերնիշևին:

Նորին Սրբության և մեծարգո պարոն դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Տ. Ներսես և Տ. Գրիգորիս եպիսկոպոսները, Տ. Տաթև ծայր. վարդապետը և Տ. Ասողիկ աբեղա Արխատակեյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀԻ, ԲՐԱԶԻԼԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 13.30-ին, Հայոց Հայրապետը այցելում է Բրազիլի նահանգապետ Ջոզե Օռնելլասին և ջերմ զրույց ունենում նրա հետ:

Ժամը 14-ին Նորին Սրբությունը այցելում է Հանրապետության փոխնախագահ Սուրելիանո Շավես դե Մենդոնսային, որը խոր հարգանքով և պատվով ընդունում է Հայոց Հայրապետին և սրտագին զրույց ունենում Նրա հետ:

Վեհափառ Հայրապետը և Բրազիլիայի հանրապետության փոխնախագահ Աուրելիանո Շավես դե Մենդոնսան

Հանդիպում Բրազիլիայի արդարադատության մինիստրի հետ

Այնուհետև, հրաժեշտ առնելով մեծարգո փոխ-նախագահից, Նորին Սրբությունը այցելում է արդարադատության մինիստր Իբրահիմ Աբի Ասկեին և ջերմ զրույց ունենում նրա հետ:

Նույն օրը, ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով Բրազիլից վերադառնում է Սան Պաուլո:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 25-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 9-ին, հյուրանոցի իր հարկաբաժնում Նորին Սրբությունը ընդունում է այցելությունը Սան Պաուլոյի հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչների՝ գլխավորությամբ վերապատվելի Անտոնիո Դոմինիոյի:

* * *

Նույն օրը, ժամը 10-ին, Հայոց Հայրապետին են այցելում Սան Պաուլոյի հայ կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչները՝ գլխավորությամբ գերապայծառ Վարդան եպիսկոպոս Պողոսյանի:

ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ «ՄԱՔՍՈՒՏ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՍՐԱՀՈՒՄ

Նույն օրը, ժամը 11-ին, «Մաքսուտ» հյուրանոցի սրահում տեղի է ունենում մամուլի ասուլիս Վեհափառ Հայրապետի և Սան Պաուլոյի թերթերի թղթակիցների միջև:

Նորին Սրբությունը հանգամանորեն պատասխանում է թղթակիցների կողմից տրված բոլոր հարցերին՝ վեր հանելով Հայ Եկեղեցու պատմական դերը անցյալում և այսօր հայ ժողովրդի կյանքի մեջ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 17-ին, Հայոց Հայրապետը այցելում է Սան Պաուլոյի նահանգապետ Անդրե ֆրանկո Մոնդոյոյին և ջերմ զրույց ունենում նրա հետ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Ավելի ուշ, ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Սան Պաուլոյի հայկական ակումբ: Նորին Սրբությունը հանդիսավոր իրադրության մեջ կատարում է նոր կառուցվելիք մարկարանի հիմնարկեքը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 26-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը «Մաքսուտ» հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը Սան Պաուլոյի Թեքեյան Մշակութային Միության անդամների:

Ժամը 12-ին Նորին Սրբությանն են այցելում Սան Պաուլոյի հայկական ակումբի ներկայացուցիչները՝ գլխավորությամբ պրն. Սանոսյանի:

Ժամը 13-ին Վեհափառ Հայրապետին են այցելում «Արմենիա» Մշակութային Միության անդամները՝ գլխավորությամբ պրն. Արշավիր Տոնեյանի:

Ընդունելություն Սան Պաուլոյի նահանգապետի մոտ

ՄԵԿՆՈՒՄ ՕՉԱՍԿՈ

Նույն օրը, ժամը 15-ին, Հայոց Հայրապետը Իր շքախմբով, ուղեկցությամբ Տ. Տաթև ծայր. վարդապետ Ղարիբյանի և Բրազիլիայի հայոց թեմի եկեղեցական վարչության մի շարք անդամների, մեկնում է Սան Պաուլոյի մոտ գտնվող Օչասկո քաղաքը:

Օչասկոն Բրազիլիայի երկրորդական քաղաքներից է: Այստեղ ապրում և գործում են շուրջ հինգ հարյուր հայեր: Քաղաքում կա հայկական եկեղեցի և դպրոց:

Քաղաքի մատույցների մոտ Նորին Սրբությանը դիմավորում և բարի գալուստ է մաղթում քաղաքագլուխ Ումբերտո Պատրոն՝ Հայոց Հայրապետին հանձնելով քաղաքի խորհրդանշական բանալին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է տեղի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, որտեղ հավաքվել էին բազմաթիվ հայ հավատացյալներ:

Տ. Տաթև ծայր. վարդապետի բարիգալստյան խոսքից հետո Նորին Սրբությունը օրհնում է եկեղեցում հավաքված հավատացյալներին՝ պատգամելով միշտ հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն և հայրենի սովորություններին:

Այնուհետև, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տեղի ազգային վարչության կողմից տրվում է ճաշկերույթ վարչության ատենապետ Հրանդ Հարությունյանի բնակարանում:

Երեկոյան ժամը 20-ին Հայոց Հայրապետը Իր շքախմբով վերադառնում է Սան Պաուլո:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 27, կիրակի:

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Սան Պաուլոյի հայոց Ս. Գևորգ եկեղեցում մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ:

Եկեղեցին և նրա շրջափակը լցված է հայ հավատացյալների խուռներամ բազմությամբ:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը արտասանում է ոգեշունչ մի քարոզ՝ ոգեկոչելով Սարդարապատի ճակատամարտում զոհված հայ մարտիկների հիշատակը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Արիւն մարտիրոսաց սերմն քրիստոնէից»:

«Մարտիրոսներու արյունը սերմը եղած է քրիստոնեության»:

Այս ճշմարտությունը հայտնած է 3-րդ դարու հայտնի եկեղեցական հայրը:

Մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հրաշալի Հարութենեն հետո, պետք եղավ, որ երեք դարեր անցնին, բազում քրիստոնյաներ նահատակվին ու մեծ հայրապետներ և վարդապետներ անսահանջ գործեն ու քարոզեն, որպեսզի քրիստոնեությունը ի վերջո հաղթանակե: Իրոք, 2-րդ և 3-րդ դարերուն քրիստոնեությունը սաստիկ հալածվեցավ ամբողջ Հռոմեական կայսրության տարածքի վրա՝ Երուսաղեմեն մինչև Դամասկոս, Փոքր Ասիա, Հունաստան, Հռոմ և մինչև այսօրվա քրիստոնյա երկիրները: Այդ ամբողջ տարածքի վրա հալածանքները երբեմն սաստիկ կերպով կատարվեցան, սակայն, ինչքան հալածվեցավ քրիստոնեությունը, այնքան տարածվեցավ: Ահա թե ինչու ճշմարիտ է Եկեղեցու հոր խոսքը, թե՝ «Արիւն մարտիրոսաց սերմն քրիստոնէից»:

Այդպես զարգացավ և հաստատվեցավ նաև քրիստոնեությունը մեր երկրի՝ Հայաստան աշխարհի մեջ: Դուք կհիշեք, անշուշտ, Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերը, որոնք 3-րդ դարու վերջերուն Տրդատ թագավորի ձեռքով նահատակվեցան, որովհետև խոստովանեցան իրենց քրիստոնեական հավատքը: Բայց հրաշալի պայմաններու մեջ և պատմական դեպքերու այլևայլ նպաստավոր ընթացքով, նույն Տրդատ թագավորը, որ քրիստոնյաներ կհալածեր, ինքը դարձի եկավ ու Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռքով մկրտություն ստացավ իր ընտանիքով, և չորրորդ դարու յուսաբացին Հայաստանը դարձավ քրիստոնյա երկիր, առաջին քրիստոնյա պետությունը: Եվ այսպես, դարերու ընթանքին մեր ժողովուրդը ապրեցավ և կապրի մինչև այսօր իբրև քրիստոնյա: Սակայն մեր ճակատագիրը բոլորովին ուրիշ եղավ, քան մյուս քրիստոնյա ազգերինը: Քրիստոնյա դառնալով՝ չվերջացավ մեր ժողովուրդի մարտիրոսությունը: Հակիվ քրիստոնյա դարձած՝ Հայաստանը 451 թ., ինչպես գիտեք, մեծ հարձակում մը կրեց դրացի Պարսկաստանեն, որու նպատակն էր ջնջել քրիստոնեական հավատքը և պարտադրել իրենց կրակապաշտությունը, մազդեական կրոնը: Վարդան Մամիկոնյանը և իր քաջերը իրենց արյունը թափեցին Ավարայրի դաշտին վրա: Պարսիկները կարծեցին հաղթանակը տարած ըլլալ, բայց իրենց այդ հաղթանակ կարծածը խաբուսիկ եղավ, որովհետև ավելի քան

Վեհափառ Հայրապետը քարոզում է Սան Պաուլոյի Ս. Գևորգ եկեղեցում

երեսուն տարի հայերը իրենց դիմադրությունը շարունակեցին մինչև վերջնական հաղթանակ, և նույն պարսիկ շահերը ստիպվեցան ճանչնալ քրիստոնեական ապատ կարգացումը Հայաստանի մեջ:

Սակայն Վարդանանց նահատակությունով ալ չվերջացավ մեր ժողովուրդի մարտիրոսությունը: Դարեր շարունակ ծանր օրեր ապրեցան մեր ազգն ու մեր եկեղեցին՝ շատ անգամներ հալածվելով և նահատակվելով: Մեր ամբողջ պատմությունը, մանավանդ 11-րդ դարեն մինչև 20-րդ դարը, դյուցազներգություն մը եղած է հանուն Քրիստոսի և հանուն ապատության: Սակայն ինչքան մեր ազգը սոսմեցավ, ինչքան մարտիրոսները իրենց արյունը թափեցին, այդ արյունը նոր սերմ հանդիսացավ ու նոր կյանք պարգևեց մեր ժողովուրդին: Նույնպես Մեծ Եղեռնեն հետո, երբ կարծես թե այլևս այս աշխարհի վրա հնարավոր չէր իբրև հայ ապրիլ, ինչպես Ֆրանց Վերֆելի հայտնի վեպին մեջ հերոսներեն մեկը կըսե: Բայց ահավասիկ այդ ահավոր ողբերգութենեն հետո ալ հայ ժողովուրդը իր ուժերը մեկտեղեց և գոնե մեր պատմական հայրենիքի մեկ մասին վրա՝ Արևելյան Հայաստանի վրա, իր նոր կյանքը կարողացավ ստեղծել Սարդարապատի ճակատամարտով, որու տարեդարձն է այս օրերուն:

Այսօր մայիսի 27-ն է: Սարդարապատի ճակատամարտը սկսավ մայիսի 22-ին և տևեց մինչև մայիսի վերջը և հունիսի առաջին օրերը: Դարավոր թշնամին հարձակվեցավ Արևելյան Հայաստանի վրա՝ ամբողջացնելու իր հայաջինջ ծրագիրը: Հայ ժողովուրդը մնացած էր մենակ, առանց օգնության և ջարդված վիճակով: Հայաստանը ողբի և որբի հայրենիք էր: Վասպուրականի գաղթականությունը, մոտ երեք հայյուր հազար, եկած էր ապաստան գտնելու, ո՛չ տուն ուներ, ո՛չ բավարար սնունդ, հետին թշվառության մեջ: Գրեթե ամեն օր կմեռնեին երեխաներ, ծերեր անոթութենե, հիվանդություններե կամ ցուրտեն: Այսօր, Ս. Էջմիածնի շրջակա բոլոր հողամասերը եթե փորեք, ամեն տեղ դիակներ կգտնեք թաղված, հարյուրավոր, հազարավոր դիակներ: Ընդհանուր փոսերու մեջ կթաղվեին այդ օրերուն մահացած հայերը: Այսպիսի վիճակի մեջ էր հայությունը, երբ արևմուտքեն հարձակվեցավ թշնամին, որպեսզի Թալեաթ փաշայի ծրագիրը իր լրումին հասնի, և այլևս հայ ժողովուրդի անունը աշխարհի վրա չհիշվի: Ահա այդ պահուն, հակառակ այս ծանր կացության և անօգնական վիճակին, հայ ժողովուրդը մեկ հոգի, մեկ սիրտ դարձած, ոտքի կանգնեցավ և ըսավ՝ ո՛չ: Սկսավ ինքնապաշտպանության կռիվը մայիսի 22-ին՝ գլխավորությամբ հայտնի քաջարի զորավար Փիրումյանի: Հայ Եկեղեցին ևս մասնակցեցավ այդ կռվին իր աղոթքներով և իր միջոցներով: Էջմիածինը իր աշխարհագրական դիրքով շատ մոտիկ էր ճակատին, կռվի գիծերուն: Զորավար Փիրումյան ներկայացուցիչ ուղարկած է Գևորգ Ե կաթողիկոսին՝ հայտնելու համար, թե՝ «վտանգի տակ եք, Վեհափառ, որպեսզի ապահովվի Վեհափառության և միաբանության կյանքը, լավ է Էջմիածինեն հեռանաք դեպի Սևանա լիճ»: Հայոց կաթողիկոսը պատասխանած է. «Այստեղեն չենք շարժիր, բոլորով կհավաքվինք տաճարին մեջ և կաղոթենք հաղթանակի համար»: Կաթողիկոսը հրաման կուտա նաև, որ Հայաստանի եկեղեցիներու զանգակները տևապես դողանջեն մինչև հաղթանակի ժամը հնչե: Բազմաթիվ հոգևորականներ՝ Գարեգին եպս. Հովսեփյանց, Զավեն եպիսկոպոս, բազմաթիվ վարդապետներ և հարյուրավոր քահանաներ կռվի դաշտ փութացին, դեպի Սարդարապատ, ուր տեղի ունեցավ պատմական նշանակություն ունեցող ճակատամարտը: Եվ փոքրաթիվ հայ զորքը կրցավ ետ քաշել, փախուստի մատնել տասնապատիկ ավելի զորավոր թուրքական բանակները: Փայլուն հաղթանակ՝ ար-

Սան Պաուլոյի Ապրիլյան եղեռնի հուշարձանի առջև

ձանագրվեցավ մանավանդ Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատներուն վրա: Հայաստանը փրկված էր: Հայ ապատագրական շարժումը հասած էր իր նպատակին, հասած էր իր կարգացման ճանապարհի վրա առաջին հաղթական հանգրվանին: Այդպես է, որ հիմնվեցավ առաջին հայկական պետությունը, և Սևրի դաշնագրով միջազգային ճանաչում ստացավ Հայաստանը: Սանը, և Սևրի դաշնագրով միջազգային ճանաչում ստացավ Հայաստանը: Սանկայն նոբեն ծանր և դժվարին օրեր ապրեցավ հայ ժողովուրդը երկու տարիներու ընթացքին՝ թշնամական երեք հարձակումներ կրելով իր դրացիներեն: Չորրորդ հարձակումը տեղի ունեցավ 1920-ի նոյեմբերի սկիզբներուն արևմուտքեն, Գյազիմ Կարաբեքիր փաշայի հրամանատարության ներքև: Այս անգամ հայ զորքը չկրցավ դիմադրել: Կարաբեքիր փաշան Կարսը գրավեց և մտավ Ալեքսանդրապոլ՝ այսօրվա Հայաստանի երկրորդ քաղաքը, ուր պարտադրեց իր կամքը և ստորագրել տվավ այսպես կոչված Ալեքսանդրապոլի դաշնագիրը, որով Հայաստանը ամբողջապես անձնատուր կըլլար Թուրքիային: Ահա այդ ճակատագրական պահուն էր, որ Հայաստանի մեջ նոր կարգացող ուժեր ըմբոստության դրոշակ բարձրացուցին և ռուսական զորքերու օգնությամբ կրցան դուրս քշել Կարաբեքիր փաշայի զորքերը և պատռել Ալեքսանդրապոլի սև դաշնագիրը: Եթե 1920 թ. նոյեմբերին չկատարվեր այդ փրկարար հեղաշրջումը, Հայաստանը պիտի կորսնցներ այն, ինչ որ շահած էր Սարդարապատի հաղթանակով: Այսպես է, որ նոյեմբեր 29-ով նոր ճանապարհ բացվեցավ հայ ժողովուրդի առջև կանքի վերաշինության և ծաղկումի համար նոր պայմաններու մեջ:

Ժողովուրդներու կանքին մեջ պատմության ընթացքը միշտ չէ, որ ուղիղ ճամփով կընթանա, այլ նաև երբեմն հակասություններով և հակադրություններով հանուն հայրենիքի փրկության: Սապես եղավ նաև մեր ժողովուրդի պարագային, երբ նոյեմբերյան հեղաշրջումով հայ ժողովուրդը գտավ իր կանքի նոր ճանապարհը, իր վերածնունդի ճանապարհը, հայրենաշինության ու ազգային մշակույթի ապատ ծաղկումով: Ահավասիկ այս պարագային մեկ անգամ ևս հաստատվեցավ հին ճշմարտությունը. «Արիւն մարտիրոսաց սերմն քրիստոնէից»: Մեր ժողովուրդի կանքի մեջ ալ, մեր հերոս զավակներու արյան գնով, մեր ժողովուրդը պահեց իր ինքնությունը, գոյատևեց և այսօր անանխընթաց վերելքի ճամփու վրա կգտնվի՝ ամուր պահած իր սրտին մեջ նաև երապանքը ապագա հաղթանակներու: Որովհետև Սարդարապատի ճակատամարտը տակավին կշարունակվի և պիտի շարունակվի:

Ներկա վերածնունդի շունչով կապրի ու կգործե հայաստանցի ժողովուրդը՝ ձեր քույրերն ու եղբայրները: Ձեզի համար թող ուղեցույց ըլլա այս, որպեսզի յավատես մնաք դեպի ներկան, դեպի մեր արդի վերածնած և վերաշինված մայր հայրենիքը, նաև յավատես մնաք դեպի մեր առավել պայծառ ապագան:

Այս իրադրության մեջ ես փառք կուտամ Աստուծո, որ մեր Եկեղեցին ալ ծաղկումի շրջան մը կապրի այսօր մեր մայր հայրենիքին մեջ՝ իր գլուխ ունենալով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Կապրի վերածնունդի շրջան մը՝ Մայր Հայաստանի մեջ վայելելով անսահման սերը մեր հավատացյալ ժողովուրդի և հարգանքը մեր պետական իշխանությանց: Կհրավիրեմ ձեզ բոլորդ, որ պատարագեն հետո ներկա գտնվիք հոգեհանգստյան արարողության՝ միասին աղոթելու համար Սարդարապատի հերոսներու հոգիներուն խաղաղության համար:

Թող Աստված միշտ պահապան և օգնական մնա մեր սուրբ Եկեղեցիին

և մեր հայրենիքին, որպեսզի խաղաղությամբ մեր ժողովուրդը քայլ առ քայլ մոտենա իր բոլոր արդար իդեալներուն իրականացման:

Ես կաղոթեմ նաև, որ Աստված պահապան և օգնական մնա նաև ի սփյուռքս աշխարհի տարածված մեր հոգևոր կավակներուն, որպեսզի Ս. Էջմիածնով, սուրբ Եկեղեցիով պահեն իրենց ներքին միությունը, զորությունը, եղբայրորեն գործեն, ձեռք-ձեռքի տված, իբրև հայ քրիստոնյաներ:

Մարդասեր Աստված, «Տուր աշխարհիս խաղաղութիւն, ազգիս հայոց սէր, միութիւն»: Ամեն:

Հավարտ սուրբ պատարագի, կատարվում է հոգեհանգիստ՝ Սարդարապատի ճակատամարտում զոհված հերոսների հիշատակին:

Հոգեհանգստյան արարողությունից հետո Հայոց Հայրապետը ծաղկեպսակ է դնում Սան Պաուլոյի հայ նահատակաց հուշարձանին:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում հանդիպում է ունենում Բրազիլիայի հայոց թեմի ազգային կենտրոնական վարչության անդամների հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվում են Բրազիլիայի նորաստեղծ թեմի հետ կապված մի շարք հարցեր: Նորին Սրբությունը վարչության հարգարժան անդամներին տալիս է Իր հայրապետական խորհուրդները և նրանց մաղթում հաջողություններ իրենց ազգանվեր և եկեղեցաշեն գործունեության մեջ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է Մարաշի հայրենակցական միության անդամներին և նրանց հետ անցկացնում հաճելի երեկո:

Նորին Սրբությունը Իր գնահատանքի խոսքն է ասում Մարաշի հայրենակցական միության ազգանպաստ գործունեության համար և մաղթում հաջողություններ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՀԵՏ

Մայիսի 28-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Սան Պաուլոյի քաղաքապետարան և հանդիպում ունենում քաղաքագլուխ Մայո Կովասի հետ:

Նորին Սրբության և մեծարգո քաղաքագլխի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

ԱՅՑ ԱԶԳԱՅԻՆ «ԴՈՒՐՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ

Նույն օրը, ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Սան Պաուլոյի հայկական ազգային «Դուրյան» վարժարան՝ ներկա լինելու Իր պատվին կազմակերպված հանդիսությանը:

Վեհափառ Հայրապետը Բրազիլահայ թեմի կենտրոնական վարչության անդամների հետ

Բարիգալստյան խոսքով հանդես է գալիս վարժարանի տնօրեն Տ. Եղնիկ քահանա Կյուլեյանը՝ ասելով.

«Վեհափառ Տեր,

Այսօր ազգային «Դուրյան» վարժարանի ավելի քան հիսուն տարիներու պատմության էջերուն վրա ոսկյա էջ մը ևս կավելնա Ձերդ Սրբության այցելությամբ:

Վարժարանիս տնօրենությունը, ուսուցչական կազմը և աշակերտությունը ուրախությամբ ու խանդավառությամբ կսպասեր Ձեր ժամանման:

Վեհափառ Տեր, կուզեինք այս առթիվ հակիրճ տեղեկություններ տալ Ձեզի մեր դպրոցի անցյալին և ներկային մասին:

Ազգային «Դուրյան» վարժարանը հիմնված է 1928-ին երկհարկանի փոքրիկ տան մը մեջ, ուր ոչ օրինական կերպով դասավանդություններ եղած են մինչև 1935: Այդ թվականեն սկսյալ Բրազիլի բարեխնամ կառավարությունը ընդունած է վարժարանիս գոյությունը, որ մինչև այսօր կշարունակվի: Վարժարանս ունի ութ դասարաններ և երկու մանկապարտեզ: Այս տարի տնօրենությունս, կարիքը զգալով ավելի փոքրիկներու դասարանի մը, դասարան մը ևս ավելցուց երկուքուկես-երեք տարեկան մանուկներու համար:

Վեհափառ Տեր, ազգային «Դուրյան» վարժարանը հեռավոր այս աշխարհամասին մեջ հայ ժողովուրդի զավակներուն առջև կբանա իր դռները անոնց տալու համար հայկական ոգի, ինչպես նաև գրականությունը և պատմությունը ժողովուրդի մը, որ դարեր շարունակ կրցած է պահել իր հավատքը, իր գիրն ու գրականությունը:

Այժմ վարժարանս ունի 130 աշակերտներ: Թեև ներկայիս չունինք մեծ հարմարություններ օտար վարժարաններու նման, սակայն մեր փոքրիկ դասարաններուն մեջ կպատրաստենք գիտակից, աշխատասեր ու ազգասեր հայ զավակներ: Մեր շրջանավարտները ուսման մեջ իրենց հաջողությամբ առաջնակարգ վարժարաններու շրջանավարտներու կարգին դասված են Սան Պաուլոյի մեջ, և ամեն մեկ աշակերտի հաջողությունը ոսկյա մեդալ մըն է վարժարանիս կուրծքին:

Վեհափառ Տեր, մենք՝ հարազատ զավակները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մեր սրտերուն մեջ միշտ կզգանք Ս. Էջմիածնի ջունչն ու ջերմությունը և կխնդրենք Ձերդ Սրբութենեն, որ Ձեր աղոթքներուն մեջ հիշեք նաև մեր դըպրոցը:

Վարժարանիս տնօրենությունը, ուսուցչական կազմը և աշակերտությունը կաղոթեն Նախախնամության, որ Ձերդ Սրբության պարգևե արևշատ, քաջառողջ և հաջողությամբ լի օրեր»:

Այնուհետև գեղարվեստական ճոխ ծրագրով հանդես են գալիս վարժարանի սաները՝ երգելով և արտասանելով հայկական ազգային-հայրենասիրական երգեր և քերթվածներ:

Սրտի անկեղծ թրթռումով հետևյալ հուզիչ ուղերձն է կարդում վարժարանի ութերորդ դասարանի աշակերտուհի Աննա Լուսյա Քեորքլիաննեն.

«Վեհափառ Տեր,

Բարի եկած եք մեր ծննդավայր Բրազիլը: Մենք ծնած ենք այս հողին վրա օտարության մեջ, հեռու մեր մայր հայրենիք Հայաստանեն: Մենք՝ բրազիլահայ մանուկներս, պատիվ կզգանք Ձեր ներկայությունը վայելելու այս դրպեիս, երբ մեզի բախտ պիտի վիճակվի Ձեր սուրբ Աջը համբուրելու և Ձեր օրհնությունը ստանալու:

Մենք՝ սան-սանուհիներս ազգային «Դուրյան» վարժարանի, մեծապես

ուրախ ենք և հպարտ մեզի ընծայված այս եպակի պատեհության համար: Հիշատակելի և անմոռանալի օր մը պիտի ըլլա այս օրը անկասկած, Վեհափառ Տեր:

Դուք եկած եք մեր շատ սիրելի Սուրբ Էջմիածնեն: Ձեր այս հովվապետական այցելությունը ըլլա բարի և օրհնաբեր, իսկ մեր սիրելի վարժարանին համար՝ արդյունաբեր, որպեսզի սա պահուս Ձեր աչքերուն պարզվող աշակերտներուս սակավ թիվը գալիքին բազմապատկվի:

Մենք ուրախ և հպարտ ենք, որ հայկական վարժարանի կաշակերտենք: Մեր ուսուցիչները սորվեցուցած են մեզի սիրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, մեր հայրենիքը և մեր մայրենի լեզուն: Հույսով կապրինք, որ օր մը մենք ալ բախտավորությունը պիտի ունենանք մոտեն ճանչնալու մեր շատ սիրելի հայրենիքը, Սուրբ Էջմիածինը և շնչելու մեր հարազատ երկրի մաքուր օդը ու խեմլու անուշ ջուրը:

Կաղոթենք, որ ըլլանք մեր նախահայրերուն նման ազգասեր, հայրենասեր՝ հավատարիմ մնալով մեր Եկեղեցիին, հայրենիքին և մշակույթին:

Կխնդրենք, որ Ձեր հայրապետական օրհնությունը տաք մեզի և Ձեր վերադարձին տանիք Ձեր հետ մեր բոլորի սրտագին բարևները մեր հայրենիքին մեջ ապրող մեզի տարեկից մեր քույրերուն և եղբայրներուն»:

Հանդիսության ավարտին Իր օրհնության խոսքն է ասում Նորին Սրբությունը:

Հանդիսության ավարտից հետո Հ. Օ. Մ.-ի և Տիկնանց Միության կողմից Ս. Գևորգ եկեղեցուն կից սրահում տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ընդունելության ընթացքում արտասանվում են մի շարք ողջույնի և բարիգալատյան խոսքեր Հ. Օ. Մ.-ի նախագահ Վիկտորյա Քանջարյանի, Հ. Օ. Մ.-ի շրջանային վարչության ներկայացուցիչ Սիրարփի Չալըքյանի և ուրիշների կողմից:

Ողջույնի ջերմ խոսքով հանդես է գալիս նաև Հ. Օ. Մ.-ի պատվո նախագահուհի տիկին Լուսյա Մխիթարյանը, որն իր խոսքից հետո կարդում է 1959 թ. գրված Վեհամոր հետևյալ գեղեցկախոս նամակը՝ ուղղված սիրուքի հայ մայրերին.

«Սիրելի հայ մայրեր,

Իմ համեստ կոչը կուղղեմ Ձեզի: Կուզեմ որ ըլլաք ձեր տան մեջ մեկ-մեկ դաստիարակներ: Եվ գիտցեք, որ մեծ հաջողությամբ կպսակվին ձեր թափած ջանքերը:

Մայրերը պարտավոր են ամեն գնով պոհվիլ իրենց զավակներուն, ամեն ինչ ընել անոնց դաստիարակության համար: Ես ալ օտար հողի վրա, օտար դպրոցներու մեջ, աննպաստ և տնտեսապես անհաջող պայմաններու ներքև, չեմ հուսահատած, և ամուսնու հետ մեկտեղ, զավկիս կրթության գործին նվիրված, աշխատած եմ հայեցի դաստիարակությունով մեծցնել, հայ լեզվի ուսուցման սկզբնական շրջանին ստանձնելով Մեսրոպյան տառերու ուսուցումը:

Սիրելի հայ մայրեր, սիրեցեք և սիրցուցեք Հայ Եկեղեցին, Հայաստանը և հայ լեզուն: Սիրցուցեք և ծանոթացուցեք ձեր զավակներուն հայ գրականությունը, հայ մշակույթը և հայ ավանդությունները, որոնք կարդը կկազմեն և կամբողջացնեն հայ ազգին պատմությունը:

Ես այժմ թոթափած պանդխտության փոշիները, եկած եմ հայրենիք, քաղաքացին եմ հայ պետության, կբնակիմ Էջմիածնի վանքին մեջ, որդվույս մոտ, Հայոց Հայրապետին կողքին: Ապատ ժամերուս կսիրեմ կարդալ: Կկարդամ

Հանդիպում հայ մայրերի հետ «Հայ կեդրոն»-ի սրահում

Վեհափառ Հայրապետը Սան Պաուլոյի Դուրյան վարժարանի աշակերտության հետ

վանական գիրքեր Բաֆֆիեն, Ահարոնյանեն, Զոհրապեն, Թեոդիկեն, Դեմիրճյանեն, Զորյանեն և այլն: Գեղեցիկ, համով-հոտով պատմվածքներ, ո՞ր մեկը թվեմ, այնքան գոհարներ կան, որոնց շարանը երկայն է ու անվերջ:

Կմաղթեմ, որ դուք, սիրելի հայ մայրեր, բախտ ունենաք օր մը ուխտի գալու, ձեր վավակներուն հետ միասին, Ս. Էջմիածին և մայր հայրենիք, ուրախանալու համար մեր ժողովուրդի վերածնված կյանքով:

Ողջ մնաք բոլորդ ալ, բախտավոր և երջանիկ ըլլաք ձեր ընտանիքով, ձեր վավակներով: Թող ոգին և աստվածային օրհնությունը միշտ ձեզի հովանի ըլլան:

Ջերմ ողջունիվ և սիրով՝

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱԼՃՅԱՆ
Տիրամայր

30 Մարտ 1959
Ս. Էջմիածին

Հանդիսության ավարտին օրհնության խոսքով հանդես է գալիս Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Շատ ակնիվ մայրեր և քույրեր, սիրով ձեզի կբերեմ ողջույն և օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն և մեր մայր հայրենիքեն: Շատ երջանիկ եմ, որ այս պահուս, այս գեղեցիկ դահլիճին մեջ կհանդիպիմ ձեզի, Հայ Օգնության Միության անդամներ կամ բարեկամներ, որ հավաքված եք այստեղ:

Ամեն օր նոր ուրախություն կապրիմ ես իմ այս ուղևորության ճանապարհին: Ահավասիկ այսօր նոր ուրախություն մը կկգամ իմ սրտիս մեջ ձեզի հանդիպելով: Եվ ամեն ուրախություն, զոր կվայելեմ ես իմ ճամփուն վրա, նոր երանգ մը, նոր խորհուրդ մը ունի ինձի համար: Եվ իսկապես այսօրվա այս հանդիպումը ձեզի հետ չի նմանիր իմ նախկին հանդիպումներուն: Ես կհանդիպիմ հայ մայրերու և հայ քույրերու: Քիչ առաջ լսեցի մորս գրած նամակը:

Չէի գիտեր, թե մայրս մոտ քսան և ավելի տարիներ առաջ այդպիսի նամակ մը ուղարկեր է ձեզի: Մայրս բացառիկ անձնավորություն մը չէր հայ կիներու շարքին, սովորական մայր մըն էր, ինչպես ամեն հայ մայր: Դժբախտությունը ունեցած էր տասներկու տարեկանին կորսնցնելու իր մայրը Էտիրնե քաղաքին մեջ (Ադրիանապոլիս): Եվ այդ տարիքին իր հայրը վերստին ամուսնացած ըլլալով՝ ինքը տեղափոխվեր էր իր մորաքրոջ մոտ՝ Ռոդոստո, որ այն ժամանակ հայաշատ քաղաք եղած է: Մայրս յոթը տարիներ ուսուցչուհի եղած է Ռոդոստոյի հայկական վարժարաններուն մեջ, 1907-ին փոխադրված է Պուքրեշ՝ Ռումանիո մայրաքաղաքը, ու այնտեղ ամուսնացած: Հայրս արհեստավոր էր, ապրած ենք համեստ պայմաններու մեջ: Անցյալ դարու սկիզբներուն, Պուքրեշ նոր գաղթականություն մը հաստատվելով՝ պահանջք դրած են հայկական դպրոց բանալու, սակայն հանդիպած են հին ռումանահայ թաղականներու մերժումին, որոնք հայախոս չէին: Բայց հայ մայրերը ըմբոստացած են և Զատկի օրով եկեղեցիի բակը ցույց մը կազմակերպած են՝ բողոքելով և պահանջելով հայկական դպրոցի բացումը: Ի վերջո հաջողած են: Այդ ցույցերը կազմակերպողներեն մեկը եղած է նաև մայրս: Այս բոլորը պատմելով կուզեմ ձեզի ներկայացնել հայ մայրերու քաջակորով և նախանձախնդիր ոգին պա-

հելու պահպանելու երկու բան՝ նախ իրենց Առաքելական Մայր Եկեղեցին և երկրորդ՝ իրենց մայրենի լեզուն:

Մեծ գրող Խաչատուր Աբովյանը, տակավին երկու հարյուր տարի առաջ, իր նշանավոր գիրքին մեջ հայտնի դատողություն մը ունի, թե՝ «Ազգ մը պահպանողը հավատքն է և լեզուն»: Այս պատգամը այժմեական է նաև մեր օրերուն համար:

Փառք Աստուծո, Հայաստանի մեջ այսօր թե՛ մեր եկեղեցիները կգործեն ազատորեն և թե՛ երկիրը լեցուն է դպրոցներու ցանցով պետության խնամքին ներքև: Հայաստանի մեջ քաղաք ու գյուղ չկա, ուր հայկական դպրոցներ չըլլան: Ուսումը պարտավորիչ է, և բոլոր երեխաները պարտին ավարտել գոնե միջնակարգ դպրոցը:

Հայ լեզուն կենդանի է Հայաստանի մեջ: Պետության սահմանադրության մեջ հատուկ հոդվածով հայտարարված է, որ Հայաստանի պետական լեզուն հայերենն է: Անշուշտ սիյուռքի տարածքի վրա, արտասահմանի մեջ կացությունը տարբեր է, շատ դժվար է հայկական դպրոցներ պահել, բայց մեր ժողովուրդը ամեն զոհողություն կընե դպրոցներ կառուցելու համար, ինչպես դուք այստեղ, ձեռք-ձեռքի տված, եկեղեցվո կողքին կառուցած եք հայ ազգային վարժարանը, որուն աշակերտներուն ես այս առավոտ հանդիպեցա: Անոնց թիվը հարյուր երեսունի շուրջ է: Քիչ է այդ թիվը: Ես պիտի փափագեի, որ կրկնապատկվի, որովհետև այս գաղութը մեծ է, և հետևաբար աշակերտության թիվը կրնա բարձրանալ երկու հարյուրի և նույնիսկ ավելիի:

Անհավասիկ պարտականություն մը, որ ձեր ամբողջ գաղութին կվերաբերի: Բայց թույլ տվեք ավելցնել, որ այս պարտականությունը գուցե մասնավորապես կվերաբերի ձեզի, հարգելի մայրեր և քույրեր, դուք վճռական դեր կըրնաք կատարել այս ճամփուն վրա, որպեսզի ձեր ազգային վարժարանը ավելի բարգավաճի, և հայ դպրոցեն դուրս հայ երեխաներ չմնան:

Հայերեն լեզուն աշխարհի ամենագեղեցիկ և կատարյալ լեզուներեն մեկն է: Մեղք է, որ չօգտագործենք այս աղվոր լեզուն: Տարիներ առաջ օտար լեզվաբան մը, որ հայերեն սորվեր է, ըսած է. «Եթե ինչ-որ սարսափելի դժբախտության մը հետևանքով աշխարհի բոլոր հայերը անհայտանան, պետք է ժողովուրդ մը ստեղծել, որ հայերեն սորվի ու հայերեն խոսի»:

Փառք Աստուծո, ազատ երկրի մեջ կապրիք, որևէ դժվարության առջև չեք գտնվիր պետության կողմե, եկեղեցիի դուռները բաց են, դպրոցի դուռները բաց են, և ամեն հնարավորություն ունիք, որպեսզի ձեր հայապահպանման գործը շարունակեք հետևողականությամբ, առանց հուսահատելու և միշտ լավատես:

Նաև պիտի ուզեի ավելցնել իմ հորդորը, որ դուք, հայ մայրեր և քույրեր, հաստատ կերպով, ամուր հավատքով մեր Առաքելական Մայր Եկեղեցվո անդամները մնաք: Մեր Եկեղեցին երբեմն տկարության շրջաններ կարող է ապրած ըլլալ այս կամ այն պատճառով, բայց, փառք Աստուծո, հիմա Սան Պաուլոյի մեջ նոր թեմական առաջնորդ մը ունինք հանձին Տաթև հայր սուրբին, որ եռանդագին կաշխատի ամուր հավատքով: Օգնեցեք իրեն, երբեմն անիկա կարող է գործնական դժվարություններու հանդիպիլ:

Մեր Առաքելական Մայր Եկեղեցին մեր ազգի ողնաշարն է, հիմնական վեմը, որու վրա կանգնած է մեր ազգը հապար յոթը հարյուր տարիներե ի վեր: Հայ ժողովուրդ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի գրեթե նույնացած են: Մենք տեսակ մը եկեղեցի-ժողովուրդ ենք սկիզբեն ի վեր և մինչև այսօր: Մենք ուրիշ Եկեղեցի չունինք, մեր ազգային Եկեղեցին Հայաստանյայց Առա-

քելական Եկեղեցին է՝ անսասան կանգնած, ինչպես ինքը՝ հայ ժողովուրդը:

Ես, իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս, հպարտ եմ, որ ծառան եմ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին, հպարտ եմ, որ հայ եմ և կտեսնեմ մեր ժողովուրդի աճը, կարգացումը, ծաղկումը թե՛ Հայաստանի և թե՛ արտասահմանի մեջ: Ամուր կանգնած մեր այսօրվա վերածնած Հայաստանի հիմքերուն վրա՝ մենք երազանքը ունինք հետագա նորանոր հաղթանակներու: Այս հավատքով պետք է գործեք նաև դուք այստեղ, թեև Հայաստանեն հեռու, բայց հայաստանցիի սրտով, հայաստանցիի երազանքներով:

Մի՛ մոռնաք մեկ, մի՛ մոռնաք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մի՛ մոռնաք մայր հայրենիքը: Բյուր օրհնություն ձեզի, ձեր գործին:

Մեր օրհնությունը Ս. Էջմիածնեն միշտ պիտի տարածվի ձեր վրա: Անձանձրույթ պիտի աղոթենք ձեր բոլորի քաջառողջության և արևշատության համար, պիտի աղոթենք ձեր ընտանեկան երջանկության համար, ձեր կավակներուն համար, ձեր եկեղեցիներու բարգավաճման համար և ձեր հայապահպանման բոլոր ծրագիրներու հաջողության համար:

«Ողջ լերուք կօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Հ. Բ. Ը. Միության ակումբ և կատարում նոր կառուցվելիք վարժարանի հիմնարկեքը:

Հավարտ հիմնարկեքի, Բարեգործականի սրահում տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ողջույնի և բարիգալստյան խոսքով հանդես է գալիս Հ. Բ. Ը. Միության Սան Պաուլոյի մասնաճյուղի ատենապետ պրն. Զավեն Տեր-Հարությունյանը՝ ասելով.

«Վեհափառ Տեր,

Մեծ պատիվ է ինձի համար, հանուն Հ. Բ. Ը. Մ.-ի Սան Պաուլոյի մասնաճյուղի վարչության ու Բարեգործականի մեծ ընտանիքին, ողջունել Ձերդ Սրբության օրհնաբեր գալուստը:

Սուրբ Էջմիածինը դարավոր ներշնչարանը եղած է հայու հավատքին, և իր գահակալները եղած են շարունակ հույսի և հավատքի սլաստգամաբերներ և ներշնչողներ: Դուք ևս, սիրելի Վեհափառ, շարունակ հայության փառքի և հույսի, հավատքի և կորովի պատգամողը եղաք:

Ձեզմով հայրենիքը և Սուրբ Էջմիածինը սրտամոտիկ պաշտելի իրականություններ դարձան օտար այս ափերուն վրա ապրող պանդուխտ հայերուս համար:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, Բարեգործականի այս համեստ, սակայն խոր հավատարմությամբ լեցուն ապգային տունը:

Բարի պիտի ըլլա Ձեր ներկայությունը կրկնակիորեն, քանի որ մայր հայրենիքեն կուգաք և անպայման Ձեզի հետ կբերեք հայրենիքի շունչը, խանդավառող լուրերը հայրենիքի արձանագրած հաջողություններուն, որոնք մեր ալ հպարտությունն են անկասկած:

Մենք սկսած ենք կառուցանել տիպար վարժարան մը ու ընկերա-պատանեկան համալիր մը, ուրկե կհավատանք, գաղութիս մեջ գործող այլ վարժարաններու հետ միասին, պիտի կարենանք ծնունդ տալ այնպիսի հոգիներու,

Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Սան Պաուլոյի Հ. Բ. Ը. Միության երգչախմբի անդամներով

որոնք պիտի ըլլան հարապատ կավակները մեր ժողովուրդին և ապագա պահանջատերերը մեր ազգային իրավունքներուն:

Ձերդ Վեհության հայրական օրհնությունը, կոր ընծայեցիք մի քանի ռոպեներ առաջ, պիտի քաջալերե մեզ մեր աշխատանքներուն և նվիրումին մեջ:

Որքան ուրախ ենք, որ այս սիրո ճաշկերույթը կկուգադիպի մասնաճյուղիս հիմնադրության 20-ամյակին:

Այս գիշեր աներևակայելիորեն մեծ է մեր բերկրանքը ու աննկարագրելիորեն խորունկ է մեր հուզմունքը՝ տեսնելով, որ Բրազիլեն հպարավոր մղոններ հեռու, մեր Հոգևոր Պետը կհետաքրքրվի մեր կյանքով, կուրախանա մեր նվաճումներով ու կքաջալերե մեր ազգային ծառայությունը Իր հայրապետական սրբատառ կոնդակով, կոր որդիական համեստությամբ ու քրիստոնեական հավատքով ընդունեցինք այս պահուս:

Շնորհակալ ենք, Վեհափառ Տեր, այս բարձր պատիվին համար, կոր պարգևեցիք Սան Պաուլոյի Բարեգործականին:

Այս սիրո ճաշկերույթին ներկա են միությանս բարերարները, վարչական կազմը, Տիկնանց ու Երիտասարդաց Հանձնախումբերը և վարչությանս կողքին գործոն դեր կատարող անդամները: Հանուն Սան Պաուլոյի Բարեգործականի անդամներուն, պարտականություն տրվեցավ ինձի խնդրել Ձերդ Վեհափառությունեն, որ ընդունիք 20-ամյակի հուշանվեր մը, մասնավորապես պատրաստված այս առթիվ, որը իր մեջ կխտացնե մեր որդիական սերն ու հավատարմությունը հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու անոր արժանընտիր Գահակալ, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Կաթողիկոսին:

Այս հավատքով տոգորված՝ պիտի ուզեի բաժակ բարձրացնել նախ՝ Սուրբ Էջմիածնի անսասանության, ապա՝ անոր հետապնդած իդեալին հաջողության և մեր շատ սիրելի ու թանկագին Հոր, Ամենայն Հայոց Հայրապետի առողջության և արևշատության համար»:

Ճաշկերույթի ընթացքում գործադրվում է նաև գեղարվեստական մի ամփոփ ծրագիր: Հ. Բ. Ը. Միության նորակազմ երգչախումբը կատարում է «Նուբար-Նուբար», «Հոյ Նազան իմ յարը» և «Երևան դարձած իմ Էրեբունի» երգերը:

Հանդիսությունն ավարտվում է Հայոց Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ»-ով:

*
* *

Մայիսի 29-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը Սան Պաուլոյի «Մաքսուտ» հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը տեղական «Վեժա» ամսագրի թղթակիցների և պատասխանում նրանց տված բոլոր հարցերին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՃԸՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 12.30-ին, Հայոց Հայրապետը Իր շքախմբով այցելում է Հաճընի Հայրենակցական Միություն և հանդիպում ունենում միության անդամների հետ:

Հանդիպումն անցնում է ջերմ ու խանդավառ մթնոլորտում:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Սան Պաուլոյի «Մաքսուտ» հյուրանոցի ճաշասրահում Սան Պաուլոյի հայոց թեմի Ազգային Կենտրոնական Վարչության և Ընդունելության Պատվո Հանձնախմբի կողմից կազմակերպվում է համագաղութային ողջերթի ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ընդունելությանը ներկա էին՝ Տ. Ներսես և Տ. Գրիգորիս եպիսկոպոսները, Տ. Տաթև ծայր. վարդապետ Ղարիբյանը, Տ. Առղիկ աբեղա Արիստակեսյանը, բրազիլահայ թեմի Ազգային Վարչության և Ընդունելության Պատվո Հանձնախմբի անդամները, ազգային տարբեր կազմակերպությունների և հայ հարանվանությունների ներկայացուցիչներ և բազմաթիվ հրավիրյալներ՝ շուրջ 700 հոգի:

Հանուն բրազիլահայ թեմի, ողջերթի խոսքով հանդես է գալիս Ազգային Կենտրոնական Վարչության առենապետ Արշավիր Տոնեյանը.

«Վեհափառ Տեր,

Շաբաթ մը առաջ, երբ հայրապետական Ձեր օրհնաբեր երրորդ այցելությամբ Սան Պաուլո ժամանեցիք, Ձեր հետ միասին բերիք վերածնված հայրենիքի մեր եղբայրներուն և քույրերուն ողջույններն ու համբույրները, մեր սրբազան լեռան՝ Արարատի տխուր, բայց վեհ նայվածքը և մանավանդ սուրբ Ցատկի մեծ ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այսօր, այս ողջերթի ճաշկերույթին, հանուն բրազիլահայ թեմի ազգային իշխանությանց և հանուն համագաղութային Ընդունելության Հանձնախումբի, կըսեմ՝ «Օրհնյալ է հարությունը հայ ժողովուրդի»:

Այո՛, Վեհափառ Տեր, այն ժողովուրդը, որ ասկե յոթանասուն տարիներ առաջ, պանդխտության ցուպը ձեռքին, թշվառ ու թափառական, անտեր ու անտիրական, չէր գիտեր ո՞ւր երթալ, չէր գիտեր որո՞ւ դիմել, այսօր, փառք Տիրոջ, կրնանք մեր ճակատները բաց հայտարարել՝ «Օրհնյալ է հարությունը հայ ժողովուրդի», որովհետև այսօր մենք ունինք վերածնված հայրենիք մը, որ աննախընթաց հաջողություններ կարձանագրե կյանքի բոլոր ասպարեզներու մեջ, այսօր երեկվան նույն հայ որբ մանուկները, աշխարհի չորս ծագերուն տարածված, կգիտակցին իրենց ազգային ինքնության և ամուր կպահեն իրենց քրիստոնեական հավատքը, մայրենի լեզուն և մշակույթը: Այսօր սփյուռքի բոլոր գաղութներուն մեջ հայը ունի իր դպրոցն ու եկեղեցին: Ի՜նչ հրաշք, այո՛, հրաշք, որովհետև հայը իր հավատքովն ու կամքովը գիտցավ հաղթել խավարի ուժերուն, գիտցավ հաղթել չարին, գիտցավ հաղթել մահվան:

Վեհափառ Տեր, Ձեր կեցության այս կարճ օրերուն, բրազիլահայ թեմի ամեն մեկ հավատացյալի սրտի խորանին վրա Դուք ա՛լ ավելի կորացուցիք Լուսավորչի կանթեղին բոցը, ա՛լ ավելի կորացուցիք սերն ու հավատքը Աստուծո հանդեպ ու նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ: Բրազիլահայությունը երբեք պիտի չմոռնա Ձերդ Սրբության այս շնորհաբեր այցելության պատճառած երջանիկ և ուրախ օրերը: Հանուն թեմիս Ազգային Կեդրոնական Վարչության մեր երախտագիտական խոր զգացումները կհայտնենք Ձեզի:

Բոլոր այն սրբական պարտականություններն ու աշխատանքները, զոր մեր գաղութին վստահեցաք, մեր կարելի բոլոր միջոցներով պիտի ջանանք իրագործել: Ձերդ Սրբության կարգադրությամբ բրազիլահայ թեմի հաստատումը մեծ գնահատանք մը եղավ մեր գաղութին: Այս առթիվ, ազգային իշխանու-

թյանց անունով, կոչ կուղղենք գաղութիս բոլոր կազմակերպությանց ու հավատացյալ ժողովուրդին՝ ձեռք-ձեռքի տալով, համերաշխ գործակցությամբ ա՛լ ավելի կորացնել մեր ազգային ու եկեղեցական կյանքի կառույցը՝ նպատակ ունենալով բրազիլահայության համար ստեղծել վերակարթոնքի, խաղաղ ու շինարար աշխատանքի շրջան մը:

Վեհափառ Տեր, Ձերդ Սրբության գահակալության տարիները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո և մեր ժողովուրդին համար եղան անդուլ կառուցման, հոգևոր ծաղկումի և վերելքի փառավոր ժամանակաշրջան մը: Համայն բրազիլահայությունը Ձեր գահակալությունը կնկատե Աստուծմե տրված նվեր մը հայ ժողովուրդին: Օրհնյալ ըլլա այն ազգը, որ իր ծոցեն գիտե տալ Ձեր Սրբության նման հայրապետներ: Օրհնյալ ըլլան բոլոր այն մայրերը, որ մեր ազգին կուտան Ձեզ նման վավակներ:

Ձերդ Սրբության կմաղթենք բարի ճամփորդություն, քաջառողջ և արևշատ տարիներ՝ հայցելով Ձեր սուրբ օրհնությունը»:

Ճաշկերույթի ընթացքում իրենց սրտի խոսքն են ասում նաև դոկտ. Հրանտ Սանասարը և դոկտ. Սիմոն Խրիմյանը:

Ապա հանդես է գալիս բրազիլահայ թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տաթև ծայր. վարդապետ Ղարիբյանը՝ ասելով.

«Որքան ուրախ պարտականություն էր ինձի համար բարի գալուստ մաղթել Վեհափառ Հայրապետին, նույնքան տխուր և հուզիչ պարտականություն է հիմա հրաժեշտի այս խոսքերն արտասանել:

Վեհափառ Տեր, իսկապես ծանր պարտականություն է ոչ միայն այստեղ ներկա եղող բազմահարյուր Ձեր հոգևոր զավակներուն զգացումներուն թարգմանը հանդիսանալ այս պահուս, այլ նաև ընդհանրապես բրազիլահայ մեր բովանդակ հավատացյալներուն զգացումներն արտահայտել՝ ըսելու համար, թե որքան երջանիկ օրեր ապրեցանք այս մեկ շաբթվան ընթացքին:

Գաղութն ամբողջ ուրախության մեջ ապրեցավ, գաղութն ամբողջ հաչս մեր կառավարության և մեր քաղաքակից եղբայրներուն այստեղ, Բրազիլի մեջ, հպարտացավ Ձեր ներկայությամբ, որովհետև Դուք Ձեր ներկայությամբ մինչև նախագահական պալատ և մայրաքաղաքի նախարարություններուն դահլիճները տարիք բովանդակ հայ ժողովուրդի անցյալը և ներկան: Եվ անոնք, որոնք արդեն ծանոթ են մեր պատմության, հիացումով վերհիշեցին զայն ու տեսան Ձեր պայծառ անձին մեջեն հայ ժողովուրդի տխուր անցյալը և փառավոր ներկան: Ու մենք՝ բրազիլահայերս, հպարտության զգացումներով ճակատաբաց նայեցանք այս երկրին, որ ավելի քան հիսուն տարիներ առաջ մեր այս գաղութին հայերը գրկաբաց ընդունեց և ասպնջականություն շնորհեց անոնց:

Դուք, Վեհափառ Տեր, յոթը օրերու ընթացքին, ուր որ եղաք մեր գաղութի ազգային կյանքի շրջագիծեն ներս, ըլլա դպրոց, ակումբ թե եկեղեցի, Ձեր խոսքով, Ձեր պատգամներով անգամ մը ևս բերիք մեզի հայրենիքի շունչը, Արարատի տեսքը, որպեսզի մենք հպարտությամբ գիտակցինք այն խոր իրականության, թե հայ ժողովուրդը վերածաղկած իր հայրենիքով, անսասան իր Մայր Աթոռ Ս. Էջմիածինով, հպարտ կնայի աշխարհին, լավատեսությամբ կնայի իր ապագային:

Վեհափառ Տեր, ինչպես աշխարհի չորս ծագերուն սփռված հայ ժողովուրդը. մենք ևս, իբրև մեկ մասնիկը բովանդակ հայ ժողովուրդին, հպարտ ենք մեր սրբազնագույն Կաթողիկոսով, հպարտ ենք մանավանդ անոր համար, որ Ձեր կաթողիկոսության շրջանին նոր վերելք մը արձանագրեց Մայր Աթոռը:

Գաղութիս տված Ձեր այցելությամբ, Ձեր օրհնաբեր ներկայությամբ մենք քիչ մը ավելի զորացուցինք մեր հավատքը, մեր ազգային գիտակցությունը, որուն համար Ձերդ Վեհափառության կհայտնենք մեր խոր երախտագիտությունը, շնորհակալությունը, որդիական սերը և հավատարմությունը: Շնորհակալություն անոր համար, որ Դուք զորացուցիք մեզ և ցույց տվիք, թե Հայ Եկեղեցին մայրն է հայ ժողովուրդին, թե հայ ժողովուրդը միայն Հայ Եկեղեցվո հովանիին տակ, մանավանդ սփյուռքի պայմաններու մեջ, կրնա մնալ ու գոյատևել իբրև ազգ և ժողովուրդ: Դուք անգամ մը ևս Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն մեզի բերիք օրհնություն և լույս, որպեսզի մեր հոգիներու մեջ պլպլացող բոցը առավել զորանա, ու մենք չհուսահատինք և լավատեսությամբ նայինք մեր Եկեղեցվո ու մեր հայրենիքի ապագային: Ուր որ եղաք, բոլորին ներշնչեցիք այն հավատքը, որ երբեք չտկարանան, չթուլանան, որովհետև աշխարհագրական հեռավորությունները նշանակություն չունին ըսիք, անոնք ժամանակավոր պայմաններ են, որովհետև հայ ժողովուրդը մեկ է իր հայրենիքով, Հայաստանյայց Առաքելական իր Մայր Եկեղեցիով և իր պայծառ ապագայով:

Վեհափառ Տեր, մեր այս տկար խոսքերով կարտահայտվինք այսօր, պարզապես ըսելու համար, թե որքան երախտապարտ ենք Ձեր անսահման սիրույն համար, որ հպարավոր մղոններ ճամփորդել տվավ Ձեզի ու բերավ դեպի Ձեր հարազատ զավակները, որոնք կապրին այս գաղութին մեջ Հայաստանյայց Եկեղեցվո հովանիին տակ, կապրին միշտ հիշելով և փափագելով տեսնել մայր հայրենիքը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, միշտ աղոթելով Մայր Աթոռի անսասանության և անոր Գահակալին արևշատության համար:

Վեհափառ Տեր, տխուր է մեզի համար ըսել՝ բարի ճանապարհ: Թույլ տվեք ըսել, թե մենք պիտի աղոթենք, որ Դուք մնաք նույն կորովի, նույն առողջ Վեհափառը մեր, որպեսզի հրիշ անգամներ ալ հնարավորություն ունենաք այցելելու ձեր պանդուխտ զավակներուն և բաշխելու Ձեր հայրական օրհնությունները»:

Հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետը օրհնության կոնդակներ է շնորհում տիարք Հարություն Սանոյանին, Հովսեփ Տիշչեքենյանին, Ստեփան և Արշավիր Տոնելյաններին և Մեկբեկյան ընտանիքին նրանց եկեղեցաշեն և ազգօգուտ ծառայությունների համար:

Հանդիսության ավարտին օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ

Աստուծո ողորմությամբ մեկ ամիս առաջ ես ճամփա ելա Հայաստանեն: Ս. Էջմիածնեն Աստուծո օրհնությունը իմ սրտիս մեջ առած և իմ աչքերուս մեջ Արարատի պատկերը՝ եկա դեպի Հարավային Ամերիկա սիրով ու կարոտով, եկա, որպեսզի այցելեմ այս շրջանի մեր եկեղեցիները, եկեղեցական համայնքները և հետաքրքրվիմ անոնց կյանքով: Այս առիթով թե՛ Արգենտինայի, թե՛ Մոնտեվիդեոյի և թե՛ Բրազիլի մեջ ես ոչ միայն դիմավորվեցա խանդավառ ուրախությամբը մեր հավատացյալներու, այլ նաև հարգանքովը այս երկիրներու պետական իշխանությանց:

Խոսելով հատկապես Բրազիլի մասին՝ ինձ համար անմոռանալի պիտի մնա իմ այցելությունը Բրազիլիա, ձեր մայրաքաղաքը, ուր ընդունեցին ինձ Հանրապետության ձեր նախագահը, մեծահարգ նախարարներ, ձեր նահան-

գապետը, ինչպես նաև նահանգապետը Սան Պաուլոյի, բոլոր բարձր ներկայացուցիչները այս պետության, այս քրիստոնյա ժողովուրդին: Ես երախտապարտ եմ այս պետական ուշադրության և հարգանքին համար, որ իմ անձի միջոցավ տարածվեցավ ձեր բոլորի վրա: Հետևաբար իմ առաջին խոսքն այս բաժանումի պահուն պիտի ըլլա աղոթք մը, որ Աստված բրազիլյան երկիրը միշտ պահե խաղաղության և անական վերելքի ու ծաղկումի մեջ:

Ես պետք է շնորհակալություն հայտնեմ նաև իմ հոգևոր եղբայրներուն, քույր Եկեղեցիներու ներկայացուցիչներուն, որոնք ինձ դիմավորեցին և այսօր ալ կգտնվին այս սեղանի շուրջ:

Ես կուզեմ ողջունել այստեղ ներկայությունը նաև Ռվկալա ընտանիքի անդամներուն՝ այս գաղութի մեծ բարերարի կավակներուն, որոնք այս օրերուն միշտ մեզի հետ եղան: Կմաղթեմ իրենց քաջառողջություն և ընտանեկան երջանկություն:

Իմ ջերմ շնորհակալությունը կուզեմ ներկայացնել այստեղ պրն. Արշավիր Տոնելյանին և Կեդրոնական Վարչության բոլոր անդամներուն, նաև Ընդունելությանց Հանձնաժողովի անդամներուն, Տիկնանց Հանձնաժողովի մեր քույրերուն, ինչպես նաև բոլոր այն միություններուն և կազմակերպություններուն, որոնց հետ ես տարբեր առիթներով հանդիպումներ ունեցա: Ես անգամ մըն ալ հաստատեցի, որ իմ այցելության առիթով այստեղ ստեղծված է միության գեղեցիկ մթնոլորտ մը: Իրապես բոլոր կազմակերպությունները, ինչ անուն ալ կրեն, ձեռք-ձեռքի տված ընդունեցին Կաթողիկոսին: Ասկե ավելի մեծ նվեր չէր կրնար ըլլալ ինձի համար: Կմաղթեմ և կցանկամ, որ միասնության այս ոգին շարունակվի նաև իմ երթալես հետո, և դուք այսպիսով նորանոր հաջողություններ արձանագրեք ձեր եկեղեցական, մշակութային, կրթական աշխատանքներու ճանապարհին վրա: Միությունը զորություն է իսկապես, և միությամբ հայերը կրնան հրաշքներ իրագործել:

Սիրելիներ, ես եկա Ս. Էջմիածնեն, որպեսզի մոտեն ծանոթանամ ձեր համայնքային կյանքին, ձեր եկեղեցական, կրթական կյանքին, որ իմ մշտական մտահոգության առարկան է, իբրև առաջին պատասխանատուն և սպասավորը մեր Եկեղեցիին: Երբեմն ինչպիսի ծանր մտահոգություններու տակ կգտնվիմ ես, երբ այստեղ կամ այլուր կնկատեմ ներքին անհամաձայնություններ և բաժանումներ: Ինձ համար տառապանք է այդ: Ես երկար տարիներ ոչուրջ մտահոգություններու տակ կգտնվեի Հարավային Ամերիկայի մեր եկեղեցիներու վիճակի պատճառով: Եվ այս երեք երկիրներու հայերը բավական երկար տարիներ անորոշության շրջաններ ունեցան, սակայն արդեն մեկ-երկու տարի է, որ կացությունը սկսավ բարվոքիլ: Արգենտինայի թեմը և ձեր թեմը ունին արդեն արժանավոր առաջնորդներ:

Բազմաթիվ անգամներ ընդգծված է Հայ Եկեղեցվո դերը հայ ազգի միասնության տեսակետեն: Իսկապես Աստուծո կողմե պարգևված հաստատություն մըն է մեր Ս. Եկեղեցին, որ մայր դաստիարակն է մեր ազգին և առաջնորդող ոգին, ուժը, մխիթարիչը, ճանապարհ բացողը դեպի մեր երազանքներու իրականացումը:

Այսօր մեր Եկեղեցին, ի գլուխ ունենալով Սուրբ Էջմիածինը, մասնավորապես առաքելություն մը ունի արտասահմանի հայ կյանքին մեջ: Կա մեկ միացնող և իրարու կապող սրբական հաստատություն, այդ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին է՝ իր պատմական կեդրոն Ս. Էջմիածնով, հիմնաքարը արտասահմանի հայության կյանքի: Այդ հիմնաքարը ամուր պետք է պահպանել, մեկ ու անբաժան: Անոնք, որոնք կփափագին ապահովել գոյատևումը

հայ ժողովուրդին սփյուռքի պայմաններու մեջ, առաջին հերթին պետք է կապեր ստեղծեն հիմքերը մեր Առաքելական Մայր Եկեղեցիին, պետք է ամրապնդեն իրենց կանոնական կապը Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի հետ: Հետևաբար, ես կուզեի իմ վերջին կոչն ուղղել ձեզի, որ համախմբվիք բոլորդ այստեղ ձեր թեմական առաջնորդի և եկեղեցական կազմակերպության շուրջ և օգնեք Տաթև վարդապետին, որպեսզի քայլ առ քայլ կարողանաք կենսագործել այդ առաջադրանքը:

Վեհափառ Հայրապետը տալիս է իր պատգամը Սան Պաուլոյում ողջերթի ճաշկերույթին

Երկրորդ հիմքը արտասահմանի մեր կյանքի՝ հայ վարժարաններն են: Արդեն ավանդություն է, երբ հայերը իրենց հայրենիքեն այս կամ այն դժբախտ դեպքերու հետևանքով ստիպված եղած են արտասահման գաղթել, իրենց աղոթքի Տունին կողքին կառուցած են հայ վարժարան: Այսօր դուք մեկ վարժարան ունիք՝ 130 աշակերտներով: Իմ փափագն է, որ այդ աշակերտներու թիվը կրկնապատկվի հառաջիկա տարիներու ընթացքին: Այդ դժվար գործ է, գիտեմ, բայց անկարելի չէ: Հայերը հատկություն մըն ալ ունին անկարելի գործերը կարելի դարձնելու, միայն հավատք ըլլա, կոհաբերության ոգի և միասնական աշխատանք: Այդ է, որ ձեզմե կսպասեմ, սիրելիներ:

Գաղութահայության գոյատևման երրորդ անհրաժեշտությունն է մշակութային միություններու կապի ամրապնդումը մեր մայր հայրենիքի մշակութային կյանքին և արժեքներուն հետ: Հաղորդվիլ մեր հայրենիքի մշակութային կյանքին հետ՝ կնշանակե կենդանություն ստեղծել հայ գաղութներու մեջ, նոր շունչ և լույս բերել Արարատի աշխարհին:

Եվ վերջապես չորրորդ հրամայականը, որ կկարծեմ թե պետք է հետապընդվի առանց տկարանալու, այն հետևողական գործունեությունն է, որով

հայությունը պետք է հետապնդե միջազգային մակարդակի վրա ճանաչումը 1915-ի ցեղասպանության: Ես քաղաքական մարդ չեմ, ցեղասպանությունը ինձի համար քաղաքական հարց չէ, այլ քրիստոնեական խղճի և արդարության հարց: Մենք չենք կրնար մոռնալ մեր երկու միլիոն նահատակները, մենք չենք կրնար չաղոթել անոնց հոգիներու խաղաղության համար և չենք կրնար հաշտվիլ, որ աշխարհը մոռացության տա այդ մեծ ողբերգությունը:

Մենք, իբրև քրիստոնյաներ, մեր եկեղեցիներու կամարներուն տակ, գրեթե ամեն օր, կաղոթենք «վասն խաղաղության ամենայն աշխարհի»: Քրիստոսի Ավետարանի մեջ, գրեթե առաջին էջեն մինչև վերջին էջը, ամենաշատ կրկնվող բաղձանքը խաղաղությունն է: Ահա թե ինչու Քրիստոս ճանչցված է բոլորի կողմե իբրև Իշխան խաղաղության և Արեգակ արդարության: Քրիստոնեական գաղափարախոսության մեջ այս երկու հրամայականները իրարու հետ միացած են: Այսօր, ավելի քան երբեք, աշխարհը պետք ունի այս հրամայականներու կենսագործման: Խաղաղության հրամայականը կենսական անհրաժեշտություն է նաև մեր ազգին համար: Մենք նահատակված ժողովուրդ եղած ենք: Հպիվ վաթսուն և ավելի տարի է, որ ապատ շունչ կքաշենք մեր խաղաղ ու ապահով երկրին մեջ: Երբեք պիտի չուզեինք, որ այս խաղաղ և ապահով կյանքը որևէ ձևով վտանգի ենթարկվեր՝ նկատի ունենալով մանավանդ Հայաստանի աշխարհագրական դիրքը: Որևէ ժողովուրդի կյանքի ճակատագիրը մեծ չափով կախված է այդ երկրի աշխարհագրական դիրքեն:

Մեր չար բախտեն մեր երկրի աշխարհագրական դիրքը աննպաստ եղած է դարեր շարունակ: Վա՛յ մեզի, եթե կրկնվին անցյալի ողբերգությունները: Հետևաբար, թե՛ իբրև քրիստոնյաներ, թե՛ իբրև հայ ժողովուրդի և Եկեղեցվո զավակներ, մեր աղոթքն է առ Աստված, որպեսզի խաղաղությունը պահպանվի, և արդարության արեգակի տակ ժողովուրդները, պետությունները վենքերը մեկ կողմ նետեն և խաղաղ միջոցներով լուծեն իրենց հարցերը, համամարդկային միասնության գիտակցությամբ:

Ողջ լերուք և քաջառողջ՝ ընտանեկան երջանկությամբ և բարի գործոց հաջողությամբ:

Տեր Աստված, «Տուր աշխարհիս խաղաղություն, ազգիս հայոց սեր, միություն». ամեն: